ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵԳԵԼՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Կ. Մ.

Եթե խորությամբ ուսումնասիրենք Հեգելի «Իրավունքի փիլիսոփայությունը» (1821 թ.) և դրանում առաջադրված գաղափարները, անշուշտ, կնկատենք, որ իր ժամանակի սոցիալական մտածողությունը մի ամբողջ դարաշրջան առաջ մղած այդ երկը դուրս է գալիս իրավունքի՝ որպես սոսկ առանձնահատուկ սոցիալական կատեգորիայի ըմբռնման սահմաններից՝ մատնանշելով այն ուղին, որով պետք է ընթանա իր դարաշրջանի սոցիալական կյանքի օրինաչափությունների բացահայտման մեջ իսկապես շահագրգռված սոցիալական միտքը: Հեգելին միանգամայն խորթ էր ինչ-որ մարգարեի դերում հանդես գալու հավակնությունը: Նա գիտակցում էր, որ պարզապես անբարոյականություն կլինի ապագայում սպասվող պատմական իրադարձությունների ծավալման կանոնների մասին գուշակություններ անելը, քանի որ, վերջին հաշվով, նա իր զարգացած պատմական կռահողականությամբ զգում էր, թե որքան շատ բան է կախված ժողովուրդների սոցիալ-բարոյական հասկացություններից և հատկապես «արդարության» մասին նրանց պրագմատիկ պատկերացումներից:

Գերմանացի գրող, պատմավեպի եվրոպական հեղինակություններից մեկը՝ Լիոն Ֆայխտվանգերը, միանգամայն իրավացի էր՝ իր հանրահայտ «Գոյա»-յի մեջ նկատելով, որ «Մեռածները բացում են ողջերի աչքերը»: Կարծում ենք՝ այս իմաստուն խոսքը տեղին է հիշել նաև իրավունքի հեգելյան փիլիսոփայության պատմական գաղափարների գնահատման կապակցությամբ, մանավանդ որ հենց «Իրավունքի փիլիսոփայության» մեջ է Հեգելն ընդհուպ մոտենում պատմության տրամաբանությունը գոյաբանական կատեգորիաների միջոցով բացահայտելու գաղափարին: Այդ երկում, որտեղ Հեգելը փորձում էր ավարտուն տեսքի բերել և՛ իրավունքի, և՛ պետության, և՛ քաղաքացիական հասարակության կատեգորիաների ներքին կախվածությունների իր իսկ ուրվագծած համակարգը, առաջին անգամ առանցքային գաղափարի նշանաբանով է դրվում սոցիալական կյանքի «սուբստանցիալ» օրենքների միջոցով պատմական դարաշրջանի էությունը բացահայտելու խնդիրը:

Միայն ժամանակն է իր հետ բերում հանճարեղ գաղափարների բուն իմաստը բացահայտող օրենքների պատմական տեսանելիությունը: Սակայն մենք չգիտենք, թե ինչո՞ւ է դա լինում հենց այդպես, ինչպես չգիտենք նաև այն, թե ինչո՞ւ է, որպես կանոն, սոցիալական մեծ գաղափարների առաջացրած ոգևորությունն ինչ-որ անկանխատեսելի անխուսափելիությամբ իր հետ բերում թյուրիմացական պատկերացումների մի ամբողջ շղթա, որից ազատագրվելու համար մարդկությունը որպես փրկագին ստիպված է լինում հատուցելու ողբերգությունների ձևով: Բայց հաստատապես գիտենք, որ սոցիալական մեծ

գաղափար-ների ըմբռնման համեմատ է բարձրանում յուրաքանչյուր մարդկային սերնդի ինքնաճանաչողության աստիճանը։

Իսկ ինչո՞ւ իրավունք և ոչ թե բարոյականություն, և ոչ թե սեփականություն, և ոչ թե պետական կարգ և այլն։ Որովհետև, սկսած Պլատոնից և Արիստոտելից մինչև այսօր, մարդկային մտքին միայն իրավական հարաբերությունների շրջագծում է հաջողվել քիչ թե շատ հետևողականորեն շոշափել հասարակության անատոմիայի բուն հիմքերը և այդպիսով մոտենալ ցանկացած դարաշրջանի մարդկային կյանքը բնութագրող սոցիալական հյուսվածքներին։ Դա արդեն նշանակում էր, որ իրավունքը՝ որպես «ֆենոմեն» և կատեգորիա, օժտված է մի այնպիսի յուրահատուկ սոցիալական սուբստանցի արժանիքով, որը հնարավոր է դարձնում նրա փոխանցումը մի դարաշրջանից մյուսին՝ մարդկային կյանքի սոցիալական գործընթացներում չափողականության գործառույթներ կատարելու համար։ Իրավունքն ինքն իրեն բնութագրել չի կարող՝ պայմանավորված հենց իր՝ իրավունքի բուն էությամբ՝ որպես ցանկացած սոցիալական հարաբերություն իր իսկ սեփական որոշակիության մեջ պահպանելու համար պահանջվող համակողմանի ձև։ Որոշակի իմաստով կարելի է ասել, որ իրավունքը նույն դերն է իրագործում սոցիալական կյանքում, ինչպիսին փողն ապրանքափոխանակության մեջ՝ որպես համընդհանուր համարժեք, որչափով խոսքը վերաբերում է բացարձակապես սոցիալական հարաբերությունների միայն ձևորոշությանը։

Հանճարեղ գաղափարները վեր են կանգնած որոշակի դարաշրջանի չափողականությունների իշխանությունից։ Դա լինում է, ըստ երևույթին, այն պատճառով, որ որոշակի դարաշրջանում կատարվող իրադարձությունները չեն փոխում պատմության ընդհանուր տրամաբանությունը որոշող սուբստանցիալ օրենքների բնույթը։ Իսկ հանճարեղ գաղափարների ուժը հենց այդ տրամաբանությունը բացատրելու մեջ է։ Ահա թե ինչ է ասում Հեգելը. «Ինչ վերաբերում է այն իմաստությանը, թե ինչպիսին պետք է լինի աշխարհը, ապա ասվածին կարելի է ավելացնել, որ այդ բանի համար փիլիսոփայությունը գալիս է չափից ավելի ուշացած։ Որպես աշխարհի մասին մտածողություն՝ այն երևան է գալիս միայն այն բանից հետո, երբ իրականությունն արդեն վերջացրել է իր ձևավորման գործընթացը և հասել է իր ավարտին։ Այն, ինչը մեզ սովորեցնում է հասկացությունը, անհրաժեշտորեն ցույց է տալիս նաև պատմությունը. միայն իրականության հասունության շրջանում է իդեալականը ռեալության հետ միասին հանդես գալիս և մտավոր թագավորության կերպարով իր համար կառուցում նույն այն աշխարհը, որն ըմբռնված է իր սուբստանցում»[1]։

Կասկածից վեր է, որ Հեգելի համար մտածողության հասկացությունները, բացի մտածողության ձևեր լինելուց, օժտված են ավելի մեծ նշանակությամբ, այն է՝ իրերի օբյեկտիվ զարգացմանը պատմական ուղղվածություն տալու արժանիքով, և, արդեն այս իմաստով, Հեգելի փիլիսոփայական հայեցակարգի համաձայն, հասկացությունը գոյաբանական կատեգորիա է, որն իր այդ արժանիքում ներկայացնում է օբյեկտիվ հասարակական հարաբերության բուն էությունը

[1] **Гегель,** *Философия права, М., 1990, с. 56.*

բնութագրող ձևը: Չմոռանանք, որ այդ նույն ոգով էր Կ. Մարքսը տնտեսական կատեգորիաները մեկնաբանում իր «Կապիտալում»:

Վերն ասվածից երևում է, որ հենց Հեգելն առաջինը կռահեց պատմական իրականության և փիլիսոփայության միջև ի սկզբանե ծագած տարօրինակ հարաբերությունը, որովհետև, ինչպես նկատում է նա, որպեսզի մարդկային մտքին հաջողվի այսպես թե այնպես թափանցել պատմական գործընթացների ընդերքում թաքնված «սուբստանցիալ» բնույթի ուժերի մեջ (իսկ նա հենց այդպես էլ անվանում է որոշակի դարաշրջանը բնութագրող արմատական օրենքները), պահանջվում է զարգացման առավել բարձր աստիճան, երբ այդ օրենքները, գործելով իրենց ներակա բնույթին համապատասխան, բավարար չափով ստեղծում են իրենց սեփական ուրվագիծը տվող սոցիալ-տնտեսական կատեգորիաների համախումբը: Բայց այդ աստեղային պահը փիլիսոփայության համար ստեղծվում է միայն այն ժամանակ, երբ դարաշրջանն արդեն թեքվել է դեպի իր մայրամուտը: «Միներվայի բուն թռիչքը սկսվում է մթնշաղն ընկնելուն պես»[2],– ասում է Հեգելը:

Հեգելը հասկանալիորեն մեր դարաշրջանի մասին ոչինչ չէր կարող ասել: Բայց մեր դարաշրջանն ինքն է հաստատում Հեգելի իրավացիությունը նրանում, որ քանի դեռ մարդկային կյանքի առկա հիմքերում ընկած անմիջական-էմպիրիկ հարաբերությունները բավարար որոշակիությամբ չեն դրսևորվել իրենց զարգացման օրենքներով և, ուրեմն, դեռևս զուրկ են ենթադրվող ապագայի տեսակետից քիչ թե շատ չափով կյանք մտած սոցիալ-տնտեսական ձևերից, ոչ ոք, ով էլ որ նա լինի, իրավունք չունի, հանուն սոսկ սոցիալական մեծ գաղափարի, հասարակությանը շուռ տալու իր տնտեսական անատոմիայի տեսակետից դեպի անորոշ կարգի կողմը և, այսպիսով, միանգամից ոստնել հենց պատմության վրայով (ինչպես դա եղավ 1917 թ.՝ «Հանուն սոցիա-լիզմի», և ինչպես դա կրկնվեց 1991 թ., երբ ամբողջ մարդկությունը զոհաբերվեց հանուն, այսպես կոչված, «ազատ շուկայի» կարգի): Ո՞վ է մեղավոր:

«Իրավունքի փիլիսոփայությունն» ուշադիր ընթերցելու դեպքում, իհարկե, ոչ միանգամից, երևում է, թե ինչպես Հեգելը, հակառակ իդեալիստական սենտենցների և իրեն ոգեշնչող «իրավունքի գաղափարի», այնուամենայնիվ, թեքվում է դեպի մարդկային անհատը, և անհատներին սոցիալականորեն ուրվագծող հարաբերություններից է սկսում բուն առարկայի քննարկումը՝ ըստ երևույթին գիտակցելով այն, որ նախքան հասարակությանը մի որոշակի իրավական կարգի հանգեցնելը հարկավոր է ելնել նրանից, ինչից որ իրականում սկսում է սոցիալական կյանքն ընդհանրապես՝ մարդկային անհատներից, այս բառի ամենալայն իմաստով: Եվ, իսկապես, իրավունքի հեգելյան փիլիսոփայությունը մեզ խորհուրդ է տալիս, որ քանի դեռ մարդկային խմբավորումը, որպես որոշակի ժողովուրդ, դեռ չի հասցրել ճանաչելու իր մարդկային անհատին և դեռ չգիտի, որ մարդկային անհատն է միակ գերագույն արժեքը բոլոր հնարավոր սոցիալական արժեքների մեջ, այդպիսի ժողովրդի համար իրավունքը, բացի

[2] Նույն տեղում:

կարգապահական պարտականություն լինելուց, ուրիշ ոչ մի այլ կարևոր բան չի կարող դառնալ, և ուրեմն չի կարող լինել քաղա-քակրթության զարգացման լծակ։

Իրավունքի հեգելյան փիլիսոփայությունը պատկանում է սոցիալական մտքի այն հազվագյուտ՝ մարդկային կյանքի բուն հիմքերը վերլուծության ենթարկող երկերի թվին, որոնք առարկայի դրական քննարկման շրջանակում, որպես հենց դրանից ինքնաբերաբար բխող մի տրամաբանական անհրաժեշտություն, լայն ընդհանրացումներ են կատարում համաշխարհային պատմության նկատմամբ և այսպիսի մեթոդաբանության շնորհիվ ըմբռնելի են դարձնում այն, ինչը հնարավոր չէ անել, այսպես կոչված, սոցիալական մտածողության որևէ առանձին վերցրած կոնկրետ ձևի սահմաններում։

Ուրեմն այն հարցը, թե ինչո՞ւ է «ոգու ֆենոմենաբանությանն» ուղղություն տվող ուժը Հեգելը որոնում հենց աշխատանքի մեջ, որպես մարդկային էությունը անընդհատ դեպի կատարելություն մղող բնապատմական հիմք, կարող է մեկնաբանելի դառնալ միայն այն դեպքում, եթե ընդունենք, որ Հեգելն արդեն կռահել էր, որ մարդու պատմական հասունության աստիճանը նրա հետապնդած նպատակների հետ ներդաշնակորեն միացնող միակ օբյեկտիվ ուժը աշխատանքն է։ Ըստ Հեգելի, աշխատանքը մարդու ինքնահիրագործման միակ հաստատուն ձևն է բոլոր դարաշրջաններում։

Կարծում ենք՝ միանգամայն իրավացի էր Կ. Մարքսը, որը Հեգելի առաջադրած այս գաղափարի մեջ էր տեսնում «ոգու ֆենոմենաբանության» բուն էությունը[3]։ Զարմանալին և տարօրինակն այն է, որ 1917 թ. «սոցիալական հեղաշրջումից» հետո մի կողմ դրված «Իրավունքի փիլիսոփայությունը» նորից կյանքի կոչվեց 1991 թ.՝ խորհրդային կարգի կործանվելուց հետո։ Դա պարադոքս է, բայց փաստ։

Խորհրդային կարգի կործանման հետ սկսված՝ մարդուն ազատություն տալու քաղաքական ֆարսերի խայտառակ շրջանցը անցնելուց հետո միայն մարդիկ հասկացան, որ պարզապես աններելի կլինի ապացուցել, որ խորհրդային դարաշրջանում բռնազբոսիկորեն կյանք մտած գաղափարական դոգմաները պատմության հնոտիների ճակատագրին արժանացնելը հավասարապես տարածելի է նաև պատմության տրամաբանությունը լուսաբանող նախկին բոլոր ուսմունքների, այդ թվում՝ Հեգելի փիլիսոփայության վրա։ Եթե իսկապես խորհրդային դարաշրջանում քիչ թե շատ անկեղծ շահագրգռություն առաջանար հասկանալու, թե ըստ էության ինչ է նշանակում պատմական դարաշրջանի «սուբստանցիալ հիմքը», ըմբռնելու՝ Հեգելի առաջադրած դրույթը, մարդիկ կկռահեին, որ այդ «սուբստանցիալ հիմքը» ոչ այլ ինչ է, եթե ոչ հենց տվյալ դարաշրջանում ապրող մարդկային անհատներին ազատություն տվող և նրանց համակողմանի սոցիալական հարաբերությունների զարգացման խթան հանդիսացող օրենքը։ Իսկ դա այն օրենքն է, որի իրագործման սահմաններում է միայն հաստատվում և բացահայտվում մարդու մտավոր զարգացման աստիճանի

[3] *Տե՛ս* **Маркс К., Энгельс Ф.,** *Из ранних произведений, М., 1956, с. 627.*

բնապատմական միահյուսվածությունը նրա աշխատանքի սոցիալական ձևի հետ։ Բնականաբար, դժվար է մարդկային պատկերացումների էմպիրիկ թաղանթում պարփակված առօրեական գիտակցության համար այնպիսի կատեգորիաների բուն իմաստի ըմբռնումը որոշակի առարկայական ձևով, ինչպիսիք են իրավունքը, մարդկային կյանքի սոցիալական գործընթացներն ընդգրկող այդ աբստրակտ-սոցիալական ձևը կամ սեփականությունը՝ որպես նյութաիրային արժեք տնօրինելու ձևը, կամ, որ շատ ավելի բարդ է, փոխանակային արժեքը՝ որպես էմպիրիկորեն շոշափելի հարստության տարբեր տեսակները մեկ ընդհանուր սոցիալական սուբստանցի՝ արժեքի հանգեցնող հարաբերություն։ Բայց սոցիալական գիտությունն այլ կերպ չի կարող բացատրել իր ժամանակի հասարակությունը, քան հենց նրա կարգի բուն հիմքերը շոշափող կատեգորիաների լույսի տակ։ Եվ, իսկապես, կապիտալիզմի սովորական շուկայական տարերքի մեջ ներքաշված և դեռ շատ կողմերից իր տնտեսական անատոմիայի հեռանկարային ազգային ձևը չգտած հայոց հասարակության համար ի՞նչ կարող է նշանակել Հեգելի գաղափարը պատմության «սուբստանցիալ» օրենքները ճանաչելու անհրաժեշտության մասին։

Ի լրումն մեր ապրած (1990-ական թվականների շրջանում) քաղաքական ողբերգությունների՝ այսօր ևս շարունակում է իշխել չգիտես ինչպես և որտեղից հայտնված այն մոլորությունը, որ իբր համաշխարհային պատմությունը չունի զարգացման ընդհանուր տրամաբանություն։ Բայց մի՞թե մենք այսօր ոչ միայն կորցրել ենք ժամանակակից արդյունաբերական ազգերի շարքին պատկանելու մեր իրավունքը, այլև, ի դրժբախտություն մեզ, նաև սոցիալական գիտության չափողականություններում մտածելու մեր ազգային ավանդաբար բնորոշող արժանիքները։

Այսպիսով, իրավունքի հեգելյան փիլիսոփայությունից հետևող եզրակացությունը, որպիսին պարտավոր է անել հայոց փիլիսոփայական միտքն իր ժողովրդի ազգային զարգացման հեռանկարում, այն է, թե որչափով ենք մենք՝ հայերս, պատմության խորքերից եկած մի ժողովուրդ, ճիշտ գնահատում մեր ազգային-մտավոր արժանիքների և սոցիալական ձեռներեցության միջև վերջին տարիների ընթացքում առաջացած սոցիալ-տնտեսական ճեղքվածքը, որպեսզի, վերջին հաշվով, կարողանանք վստահորեն ասել, որ, չնայած մեզ հասած արհավիրքներին, այնուամենայնիվ, գտել ենք մեր ազգային սոցիալական ձեռներեցությանն անկաշկանդ զարգացման երաշխիք տվող որոնելի իրավական կարգը։

ГЕГЕЛЕВСКАЯ ФИЛОСОФИЯ ПРАВА И СОВРЕМЕННОСТЬ

АВЕТИСЯН К. М.

Резюме

Какими бы специфическими социально-экономическими и правовыми отношениями не характеризовалось современное общество как

именно “рыночное”, основополагающие законы истории сохраняют свою силу, а посему исторический процесс установления новых социальных форм человеческой жизни следует рассматривать как стихийно-естественный процесс, который в решающей степени зависит от степени цивилизованного понимания самим народом собственного права и правовой системы. Именно Гегель был первым мыслителем, который, указывая на неизбежность господствующего начала стихийно-исторического процесса во всех эпохах, одновременно доказывал универсальную способность права придавать всем социальным отношениям историческую определенность.